# ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

## Հայաստանի Հանրապետության հակակոռուպցիոն ռազմավարության՝ ՀՀ կառավարության աշխատակազմի 2016թ. հակակոռուպցիոն միջոցառումների կատարողականի վերաբերյալ

**Միջոցառումների 19-րդ կետ**

Պետության կողմից մատուցվող ծառայությունների այն ոլորտներում, որտեղ դեռևս ծառայություններն էլեկտրոնային չեն մատուցվում, էլեկտրոնային ծառայությունների մատուցման վերաբերյալ համալիր ծրագրի մշակում և իրականացում:

**Արդյունք**

Նշված խնդիրների իրականացման նպատակով ՀՀ կառավարության 31-ը օգոստոսի 2015 թվականի N 1093-Ն որոշմամբ սահմանվել են պետական տեղեկատվական համակարգի ստեղծման, պետական և տեղական ինքնակառավարման մարմինների կողմից էլեկտրոնային ծառայությունների մատուցման կամ գործողությունների կատարման համար օգտագործվող էլեկտրոնային համակարգերի անվտանգության, փոխգործելիության և տեխնիկական ընդհանուր պահանջները, այդ թվում՝ ֆիզիկական ու իրավաբանական անձանց կողմից այդ համակարգերին միանալու համար անհրաժեշտ տեխնիկական պահանջների հետ կապված հարաբերությունները: Նշված որոշմամբ պետական տեղեկատվական համակարգի տեխնիկական սպասարկումը և համակարգումը (այդ թվում՝ համապատասխան ենթառեգիստրների վարումը) իրականացնող օպերատորի գործառույթները վերապահել են «Էլեկտրոնային կառավարման ենթակառուցվածքների ներդրման գրասենյակ» ՓԲԸ-ին (ԷԿԵՆԳ) (այսուհետ նաև՝ ընկերություն): ԷԿԵՆԳ-ը ստանձնել

է ՀՀ-ում էլեկտրոնային հասարակության նախագծերի իրականացման պատասխանատվությունը և իրականացնում է մի շարք կարևոր նախագծեր, որոնք միտված են էլեկտրոնային կառավարման ոլորտի զարգացմանն ու առաջընթացին:

ԷԿԵՆԳ-ը միակ լիազորված ընկերությունն է ՀՀ-ում, որը ֆիզիկական անձանց տրամադրում է էլեկտրոնային թվային ստորագրություններ նույնականացման քարտերում, ինչպես նաև զբաղվում նույնականացման քարտերի համակարգի սպասարկմամբ, համակարգում է էլեկտրոնային առողջապահության, պաշտոնական էլեկտրոնային փոստի և այլ նախագծերի ներդրումը:

Ներկայումս Հայաստանում տրամադրվում են էլեկտրոնային ծառայություններ հետևյալ համակարգերով՝

1. www.datalex.am – Դատական տեղեկատվական համակարգ
2. www.e-register.am – Բիզնեսի գրանցման տվյալների բազա
3. https://file-online.taxservice.am - Հարկային հայտարագրերի բազա
4. www.my.aipa.am – Մտավոր սեփականության իրավունքի բազա
5. http://www.mfa.am/eVisa/ - Վիզաների էլեկտրոնային շնորհման համակարգ
6. http://www.achurd.harkadir.am – ԴԱՀԿ պաշտոնական աճուրդների համակարգ
7. www.dasaran.am – Հայաստանի դպրոցների ցանց
8. www.arlis.am – Հայաստանի իրավական ակտերի բազա
9. http://www.e-cadastre.am/ - Անշարժ գույքի կադաստրի բազա
10. http://www.armeps.am/ - Հայաստանի էլեկտրոնային գնումների համակարգ
11. http://www.file-online.taxservice.am= Հարկային հաշվարկների, հաշվետվությունների ընդունում
12. http://www.e-invoice.taxservice.am- Էլեկտրոնային եղանակով հարկային հաշիվների դուրս գրում

13. http://www.e-citizen.am- Պաշտոնական էլեկտրոնային փոստ
14. http://www.e-helath.am - Էլեկտրոնային առողջապահություն
15. http://www.e-payments.am-Պետական վճարումների էլեկտրոնային համակարգ
16. http://www.e-permits.am/- Շինարարական թույլտվությունների առցանց համակարգ
17. http://request.roadpolice.am/- ՃՈ տուգանքների վերաբերյալ առցանց հարցման համակարգ
18. https://www.e-draft.am/- Իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք:

Բացի այս, ՀՀ կառավարության 2017թ. փետրվար 16 N 192–Ն որոշմամբ հաստատվել է պետական և տեղական ինքնակառավարման մարմինների տվյալների բազաներում մշակվող անձնական տվյալներն էլեկտրոնային եղանակով փոխանցելու կարգը:

Իրականացվել են միջազգային փորձի ուսումնասիրություններ: Մասնավորապես՝ ուսումնասիրվել է Վրաստանի, Էստոնիայի, Լատվիայի և Լիտվայի փորձը: Ներկայումս այս միջոցառմանն անդրադարձ է կատարվում նաև վարչարարության պարզեցման համալիր ծրագրի շրջանակներում: Սրա շրջանակներում սահմանված կարգով շրջանառության մեջ է դրված «Թույլտվությունների մասին», «Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում փոփոխություն կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության զենքի մասին օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Հայաստանի Հանրապետության անտառային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» և ՀՀ մի շարք այլ օրենքներում փոփոխություններ կամ լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը: Այս փաթեթով առաջարկվում է կրճատել թույլտվությունների

թվաքանակը, և վերացնել այն թույլտվությունները, որոնք նախատեսված չեն «Թույլտվությունների մասին» ՀՀ օրենքի նախագծով: Սա կարևոր երաշխիք է անձանց իրավունքների պաշտպանության և դրանց անհարկի սահմանափակումները հնարավորինս նվազեցնելու համար: Նախագծով առաջարկվում է նաև պարզեցնել թույլտվությունների տրամադրման գործընթացը: Սրա հիմնական նպատակն է անձանց ապահովագրել թույլտվություն ստանալու գործընթացում անհարկի վարչարարությունից, և գործընթացի հիմնական ծանրությունը տեղափոխել պետական և (կամ) տեղական ինքնակառավարման մարմնի ազդեցության դաշտ: Առաջարկվում է թույլտվություններ նախատեսող օրենքներից հանել այն հոդվածները, որոնցով սահմանվում են անհարկի և չհիմնավորված թույլտվություններ: Որոշ դեպքերում առաջարկվում է հանել այն թույլտվությունները, որոնք տրամադրելուց հետո գործնականում հնարավոր չէ վերահսկել տրամադրվող թույլտվությամբ իրավունքների և պարտականությունների պատշաճ իրացումը:

**Միջոցառումների 21-րդ կետ**

Պետության կողմից մատուցվող ծառայությունների որակի գնահատման համակարգերի ներդնում:

**Արդյունք**

Հայաստանի Հանրապետության կառավարությունը նախաձեռնել է պետական հատվածի բարեփոխումների լայն գործընթաց, որի աջակցությանն է ուղղված Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող Պետական հատվածի արդիականացման երրորդ ծրագիրը (ՊՀԱԾ 3):

Ծրագրի երկրորդ բաղադրիչով նախատեսված են ծառայությունների մատուցման բարելավմանն ուղղված էլեկտրոնային կառավարման տարբեր

լուծումներ, որոնցից մեկն ուղղված է քաղաքացի-կառավարություն շփման ոլորտում հետադարձ կապի մեխանիզմների ներդրմանը՝ քաղաքացիների և բիզնեսի համար կառավարության ծառայությունների հասանելիությունը խթանելու, բողոքներին արձագանքելու և հաճախորդների գոհունակությունը մոնիթորինգի ենթարկելու համար:

Տվյալ առաջադրանքով նախատեսվում է մշակել էլեկտրոնային ծառայությունների միասնական պորտալ, որը կզուգակցվի ինտեգրված հավաքագրման և վերլուծության մոդուլով՝ մատուցվող ծառայությունների մատչելիության և որակի մասին տեղեկություններ հավաքելու համար և ստեղծել տեղեկատվական թեժ գիծ, որը կդյուրացնի քաղաքացիների հարցերին և բողոքներին շուրջօրյա արագ պատասխանը շաբաթվա բոլոր օրերին (24/7) և օպերատորներին կտա առցանց լուծում ապահովելու հնարավորություն:

Ծրագրի արդյունքների միջանկյալ ցուցանիշներով նախատեսվում է, որ ծրագրի ավարտին առանձին պետական ծառայություններից բոլոր օգտվողների 20%-ը կամավոր հետադարձ կապ կներկայացնի ընտրված պետական ծառայությունների վերաբերյալ:

Ըստ այդմ, պետության կողմից մատուցվող ծառայությունների գնահատման նպատակով ՀՀ արդարադատության նախարարությունում փորձարարական եղանակով կիրարկման փուլում է արագ արձագանքման թեժ գծի կայքը (այսուհետ՝ կայք): Կայքի նպատակն է՝ քաղաքացիների, կազմակերպությունների և այլ շահագրգիռ անձանց կողմից բարձրացված խնդիրներին, բողոքներին և հարցումներին ավելի օպերատիվ արձագանքելը, ինչպես նաև, ներկայացված արդյունքներից ելնելով, համապատասխան ստորաբաժանումների կողմից մատուցվող ծառայությունների որակի բարձրացումը: Այսպիսով, կայքի կիրարկման արդյունքում էապես կբարելավվի հանրությանը մատուցվող ծառայությունների որակը, կբարձրանա հանրային իրազեկվածության մակարդակը և հանրային

վստահությունը, արդյունքում նաև կապահովվի հասարակությանը մատուցվող ծառայությունների՝ բաց, թափանցիկ, մասնակցային և հաշվետու գործընթացը:

Միաժամանակ, ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի նախաձեռնությամբ 2016 թվականի սեպտեմբերին Երևան քաղաքի՝ Կենտրոն, Արաբկիր և Շենգավիթ, ինչպես նաև Արմավիրի մարզի Արմավիր սպասարկման գրասենյակներում ներդրվել է էլեկտրոնային գնահատման նոր համակարգ, որը քաղաքացիներին հնարավորություն է տալիս գնահատել սպասարկման գրասենյակների աշխատակիցների և սպասարկման գրասենյակների կողմից մատուցվող ծառայությունների որակը՝ հնարավորություն ընձեռելով վեր հանել ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից մատուցվող ծառայությունների հնարավոր բացերը: Ներդրված համակարգը հնարավորություն է ընձեռում նաև սպասարկման գրասենյակների աշխատակիցների վարքագծի կանոնների պահանջների պահպանման նկատմամբ իրականացնել վերահսկողություն, որը նպաստում է աշխատակիցների վարքագծի որակի բարելավմանը:

Հետագայում նախատեսվում է նաև ՀՀ կառավարությանն առընթեր անշարժ գույքի կադաստրի պետական կոմիտեի կողմից մատուցվող ծառայությունների գնահատման համակարգը ներդնել նաև մյուս սպասարկման գրասենյակներում:

Համաշխարհային բանկի կողմից ֆինանսավորվող Հարկային վարչարարության արդիականացման ծրագրի շրջանակներում հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների որակի գնահատման նպատակով՝ ՀՀ ԿԱ ՊԵԿ հարկ վճարողների սպասարկման թվով 17 սրահներում ներդրվել են հարկային մարմնի կողմից հարկ վճարողներին մատուցվող ծառայությունների որակի գնահատման համապատասխան սարքավորումներ: Նշված սարքավորումների միջոցով՝ հարկ վճարողին հնարավորություն է տրվում համապատասխան ծառայությունը

ստանալուց հետո, համակարգի կողմից ընտրված բալային սանդղակի միջոցով գնահատել հարկային մարմնի կողմից մատուցված ծառայությունների որակը:

Հաշվի առնելով այն հանգամանքը, որ ՀՀ ԿԱ ՊԵԿ-ը ծառայություններ է մատուցում նաև հարկ վճարողների սպասարկման և հեռախոսազանգերի կենտրոնի միջոցով, հետևողական աշխատանքներ են տարվել կենտրոնի կողմից մատուցվող ծառայությունների որակի գնահատման ուղղությամբ: Մասնավորապես.

1) կենտրոնը հարկ վճարողներին տրամադրում է տեղեկատվություն հարկային և մաքսային բազմաբնույթ հարցերի վերաբերյալ, ինչպես նաև ընդունում է բողոքներ և առաջարկություններ: Կենտրոնի կողմից ընդունվող բողոքները և առաջարկություններն անմիջապես արձանագրվում և ներկայացվում են ՀՀ ԿԱ ՊԵԿ համապատասխան ստորաբաժանում: Պատասխանները ստանալուց հետո՝ կենտրոնի աշխատակիցները զանգահարում են դիմումատուներին և տեղեկացնում ստացված պատասխանների վերաբերյալ: Կենտրոնի կողմից գործող նշված հետադարձ կապի համակարգը հնարավորություն է տալիս ստանալ հարկ վճարողների արձագանքը՝ իրենց կողմից բարձրաձայնված հարցերի լուծման վերա-բերյալ,

2) կենտրոնում նախատեսվում է 2017թ. ապրիլ ամսից գործարկել նաև «Հետադարձ կապի համակարգ» ծառայությունը, որը հնարավորություն կընձեռի հարկ վճարողին՝ վերջինիս կողմից կատարված հեռախոսազանգից հետո գնահատել տվյալ հարցման արդյունքում կենտրոնի աշխատակցի տրամադրած պատասխանի որակը:

**Միջոցառումների 22-րդ կետ**

Պետական մարմինների կողմից լիցենզիաների էլեկտրոնային եղանակով տրամադրման խթանում՝ դիտարկելով էլեկտրոնային եղանակով լիցենզիաների (առնվազն պարզ ընթացակարգով տրվող լիցենզիաներ) տրամադրման հնարավորությունը:

**Արդյունք**

Սույն միջոցառման կատարումն ապահովելու նպատակով 2016 թվականի օգոստոսի 9-ին հանձնարարական է տրվել բոլոր հանրապետական գործադիր մարմիններին՝ ուսումնասիրել ՀՀ կառավարության 30.08.2012 թվականի N 1104-Ն որոշման պահանջները և e-gov.am կայքի, ինչպես նաև արդեն ծանուցումներով իրականացվող լիցենզիաների տրամադրման մեխանիզմների և նույն կայքում առկա կարգավորումների համապատասխանությունը: Կայքի ուսումնասիրությունների արդյունքում 11 պետական մարմիններ ներկայացրել են թվով 20 առաջարկություններ, ինչպես նաև արձանագրել են կայքում առկա մի շարք խնդիրներ: Բացի այս, մշակվել է «Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հոկտեմբերի 27-ի N 1109-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը (այսուհետ՝ Նախագիծ): Նախագծով նախատեսվում է մի շարք լիցենզիաներ էլեկտրոնային եղանակով հայցելու գործառույթները պատվիրակել պետական իշխանության մարմինների սպասարկման գրասենյակների գործառույթներ իրականացնող օպերատորներին: Նախագծի ընդունմամբ կկարգավորվեն իրավաբանական անձանց բացառապես էլեկտրոնային եղանակով լիցենզիաներ տրամադրելու խնդիրները: Բացի այդ, Նախագծի ընդունմամբ կկրճատվի ավելորդ վարչարարությունը, փաստաթղթաշրջանառությունը և լիցենզավորման գործընթացում կներդրվի լիցենզիայի տրամադրման ավելի արդիական համակարգ:

**Միջոցառումների 24-րդ կետ**

Լիցենզիաների տրամադրման չափանիշների վերանայում բոլոր ոլորտներում՝ լրացուցիչ պահանջների հնարավորինս պարզեցում:

**Արդյունք**

ՀՀ կառավարության 25.09.2015 թվականի N 1141-Ն որոշման N 2 հավելվածի 24-րդ կետի ապահովման նպատակով նախ ուսումնասիրվել է միջազգային փորձը (Լատվիա, Լիտվա, Էստոնիա), իսկ հետո՝ 2016 թվականի օգոստոսի 3-ին, բոլոր հանրապետական գործադիր մարմիններին հանձնարարվել է կատարել լիցենզիաների տրամադրման չափանիշների ու պայմանների վերանայում մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ՝ ստեղծելով աշխատանքային խմբեր: Աշխատանքային խմբերի նպատակն է եղել ուսումնասիրել և ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնել այդ չափանիշների հստակեցման, ոլորտի օրենսդրական պահանջների հնարավոր կրճատման և գործող մեխանիզմների պարզեցման վերաբերյալ առաջարկություններ: 2016 թվականի օգոստոսի 15-ին թվով 15 լիցենզիա տրամադրող պետական մարմին մասնավոր հատվածի հետ համագործակցությամբ ստեղծել են համապատասխան աշխատանքային խմբեր և սկսել քննարկումներ լիցենզիաների տրամադրման չափանիշների վերանայման վերաբերյալ, ինչի արդյունքում ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացվել է թվով 38 առաջարկություն:

**Միջոցառումների 26-րդ կետ**

Հանրապետական գործադիր մարմիններում հակակոռուպցիոն ծրագրերի իրականացման պատասխանատուների (անձ/ստորաբաժանում) նշանակում և գործառույթների ամրագրում համապատասխան փաստաթղթերում:

**Արդյունք**

Հանրապետական գործադիր մարմիններում հակակոռուպցիոն ծրագրերի իրականացմանն ուղղված աշխատանքները համակարգվում են պատասխանատուների կողմից:

**Միջոցառումների 27-րդ կետ**

Հանրապետական գործադիր մարմիններում հակակոռուպցիոն ծրագրերի իրականացումը համակարգող պաշտոնատար անձի (առնվազն աշխատակազմի ղեկավարի կամ մարմնի ղեկավարի տեղակալի մակարդակով) նշանակում:

**Արդյունք**

Բոլոր հանրապետական գործադիր մարմիններում հակակոռուպցիոն ծրագրերի իրականացումը համակարգում են պաշտոնատար անձինք, որոնք 2015թ.-ին նշանակվել են որպես իրենց ոլորտներում հակակոռուպցիոն ծրագրերի համակարգողներ:

**Միջոցառումների 40-րդ կետ**

Էլեկտրոնային ժողովրդավարության (e-democracy) առանձին գործիքների ներդնում:

**Արդյունք**

Ներկայումս իրականացվում է միջազգային փորձի ուսումնասիրություն՝ Էլեկտրոնային ժողովրդավարության (e-democracy) առանձին գործիքների վերաբերյալ: Միաժամանակ, Հայաստանի Հանրապետության կառավարության հավանությանն է արժանացել «Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի մարտի 25-ի թիվ 296-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը: Նշյալ որոշման համաձայն՝ ստեղծվել է նորմատիվ իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայք (www.e-draft.am), որն ապահովում է իրավական ակտերի նախագծեր մշակող գերատեսչությունների կողմից դրանք հանրությանը ներկայացնելու կարգավորված գործընթաց՝ առցանց հանրային քննարկումների եղանակով ապահովելով նաև հանրության մասնակցությունը իրականացվող աշխատանքներին: Կայքը հնարավորություն է ընձեռում առցանց հետևել նախագծի ընթացքին (նախագիծն ընդունվել է, թե ոչ, ինչպես է խմբագրվել, ինչու չի ընդունվել նախագծի վերաբերյալ կատարված առաջարկը և այլն): Բացի այդ, մշակվել է «Լիցենզավորման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին», «Գործունեության իրականացման ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» և «Պետական տուրքի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերի փաթեթը, որով պետք է ներդրվի լիցենզիաների էլեկտրոնային

միասնական գրանցամատյանի համակարգ: Այս համակարգի ներդրումը կխթանի «Էլեկտրոնային Հայաստան» ստեղծելու ճանապարհին էլեկտրոնային կառավարման զարգացմանը, դրանով կնվազեցվեն կոռուպցիոն ռիսկերը, կապահովվի մատուցվող ծառայությունների բարձր որակը և հասանելիությունը հանրության լայն զանգվածների համար: Էլեկտրոնային կառավարման զարգացումը, այդ թվում՝ լիցենզիաների էլեկտրոնային գրանցամատյանի ներդրումը, կնպաստի հանրային կառավարման համակարգում թափանցիկության, հաշվետվողականության և արդյունավետության բարձրացմանը: Բացի այս, միասնական էլեկտրոնային գրանցամատյանի ստեղծումը կնվազեցնի քաղաքացիների կողմից պետական մարմիններին ներկայացվող թղթային փաստաթղթերի ծավալը:

**Միջոցառումների 42-րդ կետ**

Քաղաքացիական հասարակության կազմակերպությունների հետ համագործակցությամբ՝ պետական ծրագրերի իրականացման և հանրային ծառայությունների մատուցման նկատմամբ մշտադիտարկման համակարգ ներդնելու վերաբերյալ առաջարկությունների և իրավական ակտերի նախագծերի ներկայացում:

**Արդյունք**

Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին կից գործող անկախ փորձագիտական հանձնախմբի կողմից 2016 թվականի դեկտեմբերի 13-ին ՀՀ կառավարության աշխատակազմ է ներկայացվել միօրինակ՝ միասնական մոնիթորինգային կանոնների (մեխանիզմ), ընդհանուր տվյալների հավաքագրման և զեկուցման՝ գնահատման ուղեցույցի նախնական տարբերակ, որն ուղարկվել է գերատեսչություններին՝ կարծիքի: Բացի այս, «Իրավաբանների հայկական ասոցիացիա» հասարակական կազմակերպության կողմից մշակվել և Կոռուպցիայի

դեմ պայքարի խորհրդի՝ սույն թվականի հունվարի 21-ին կայացած նիստի ընթացքում քննարկվել է «Հանրային ծառայությունների մատուցման ոլորտում վարչական կոռուպցիայի հաղթահարում՝ հանրային վերահսկողության արդյունավետության բարձրացման միջոցով «Հակակոռուպցիոն կենտրոնների ազգային ցանցի գործարկում» ծրագիրը: Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդի որոշմամբ ներկայումս այդ հարցի վերաբերյալ ընթանում են քննարկումներ:

**Միջոցառումների 53-րդ կետ**

ՀՀ հակակոռուպցիոն ռազմավարության իրականացման 2015-2018 թթ.-ի միջոցառումների ծրագրի մոնիթորինգի ցուցանիշների համակարգի մշակում ու ներդնում:

**Արդյունք**

Կոռուպցիայի դեմ պայքարի խորհրդին կից գործող անկախ փորձագիտական հանձնախմբի կողմից մշակվել է տվյալների հավաքագրման և մոնիթորինգի մեխանիզմի նախագիծ- տարբերակ, որը ՀՀ կառավարության աշխատակազմի կողմից ուղարկվել է գերակա ճանաչված չորս ոլորտային գերատեսչություններ՝ ՀՀ առողջապահության, ՀՀ կրթության և գիտության նախարարություններ, ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե և ՀՀ ԿԱ ՀՀ ոստիկանություն՝ մինչև 2017 թվականի փետրվարի 10-ը անկախ փորձագիտական հանձնախմբի անդամների հետ համատեղ քննարկելու և նախնական տարբերակը ՀՀ կառավարության աշխատակազմ ներկայացնելու համար: